Կին և քաղաքականությունը

2019 հատուկ թողարկում

Անվճար հավելված

www.WomenNet.am

Ի՞նչ են փաստում ՏԻՄ-երում կանանց մասնակցության հանրային ընկալումների հետազոտության արդյունքները

էջ 3

© ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր

«Չկա այնպիսի փաստարկ, որը կարդարացնի կանանց նվազ մասնակցությունը»

Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգը ստեղծվեց 1995 թվականին ՀՀ Սահմանադրության ընդունումից հետո: Տեղական ինքնակառավարման մարմինների առաջին ընտրություններն անցկացվեցին 1996-ին:

Այսօր, ավելի քան քսան տարի անց, համակարգը դեռևս զարգացման փուլում է, անելիքներ շատ կան, հատկապես ավագանու ինստիտուտի կայացման ուղղությամբ: Հանրապետությունում շարունակվում է վերջին տարիներին սկիզբ արած համայնքների խոշորացման գործընթացը, որը, ըստ 2011 թվականին ընդունված «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգի», նպատակ ունի տնտեսապես ավելի կայուն համայնքներ ունենալու և համայնքների միավորված ռեսուրսները (մարդկային, ֆինանսական, հողային և այլն) առավել արդյունավետ օգտագործելու: Արդյունքում, առաջվա մոտ հազար համայնքների փոխարեն այսօր Հայաստանում կա 502 համայնք, որից 52-ը՝ միավորված համայնքներն են:

ՏԻՄ համակարգի կայացածության ցուցանիշներից մեկն էլ կանանց մասնակցությունն է տեղական որոշումների ընդունման մակարդակում, և այդ առումով պետք է փաստել, որ կանանց թիվը ՏԻՄ-երում միշտ էլ ցածր է եղել, իսկ համայնքների խոշորացման արդյունքում ավելի է նվազել՝ նոր «ապակե առաստաղ» գծելով կանանց համար: ՏԻՄ-երի գոյության ընթացքում կանանց թիվը համայնքների ղեկավարների թվում գրեթե չի փոխվել՝ տարիներ շարունակ մնալով միջինը 2%-ի սահմաններում, ամենաբարձր ցուցանիշը եղել է 2008-ին՝ 2.5%, ամենացածրը 2019-ի հուլիսի տվյալներով՝ 1.8%: Մինչդեռ, 2000 թվականին Հազարամյակի զարգացման նպատակների շրջանակում պետությունը պարտավորվել էր այդ թիվը առնվազն 10%-ի հասցնել: Ավագանիներում էլ կանանց ներգրավվածությունն այս պահին ընդամենը 9.3 % է կազմում:

Թեև այսօր գործող Կայուն զարգացման նպատակների նոր հանձնառությունների շրջանակում մեր պետությունը կոնկրետ նշաձող կանանց մասնակցության առումով չի գծել, ակնհայտ է, որ կանանց նմանօրինակ ցածր ներկայացվածությունը տեղական իշխանության մակարդակում Հայաստանին պատիվ չի բերում, քանի որ միջազգային չափանիշներով որակվում է որպես խտրականություն կանանց նկատմամբ: Հաճախ արդարացման համար ասվում է, որ կանայք իրենք չեն ուզում առաջադրվել ՏԻՄ-երում, սակայն դրան հետևող տրամաբանական հարցը՝ թե ինչու չեն ուզում, զարմանալիորեն չի տրվում: Իսկ եթե, այնուամենայնիվ, տրվում է, ապա հազար ու մի պատճառ ու խոչընդոտ են բացահայտվում, որոնք ունակ են հաղթահարելու միայն եզակի կանայք: Մնացածը գերադասում են պատսպարվել «չեմ ցանկանում» պատասխանի ներքո...

Այս համատեքստում հատկանշական է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանի դիտարկումը, որը հնչել է տարեսկզբին մեկնարկած «Կանայք քաղաքականության մեջ» ծրագրի շնորհանդեսին. «Այսօր Հայաստանում ունենք 300-ից ավելի կին ավագանու անդամներ (ընդհանուր 4011-ից – խմբ.), բայց սա նվազ թիվ է, և ես կարծում եմ, որ նաև այս ծրագրի միջոցով նրանց ներգրավվածությունը ՏԻՄ համակարգում կմեծանա: Այսօր մենք տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումների ընթացքում ենք, և դրա մեջ կանանց մասնակցությունն առաջնային է: Այս ծրագրի հիմնական թիրախը հենց ՏԻՄ մակարդակում կանանց թվի ավելացումը պետք է լինի, քանի որ վստահ ենք, որ չկա այնպիսի փաստարկ, որը կարդարացնի նրանց ավելի նվազ մասնակցությունը»...

Շարունակությունը՝ էջ 2

Կանայք համայնքների ղեկին

- Հանրապետության տասը մարզերից չորսում՝ Արագածոտնում, Տավուշում, Վայոց ձորում, Սյունիքում, կին համայնքի ղեկավարներ չկան:
- 49 քաղաքային համայնքներից միայն մեկն է կին ղեկավարում՝ վերջերս ընտրված էջմիածնի քաղաքապետ Դիանա Գասպարյանը:
- 52 միավորված/խոշորացված համայնքներից միայն մեկն է կին ղեկավարում՝ Ամասիայի համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյանը:
- Կանայք ընդամենը 5.8% են կազմում բնակավայրերի վարչական ղեկավարների թվում՝ 413 վարչական ղեկավարներից միայն 24-ն են կին:

Ընդ որում.

Եթե 2008-ի տվյալներով հանրապետության 915 համայնքներից 24-ն էին (2.6%) կանայք ղեկավարում, 2016-ին՝ 793 համայնքներից 17-ը (2.1%), ապա 2019-ին՝ հուլիս ամսվա տվյալներով, 502 համայնքներից միայն 9-ն են կանայք ղեկավարում (1.8%):

Կանայք ղեկավարում են Արարատի մարզի Վերին Դվին (Լյուդմիլա Պետրովա), Արմավիրի մարզի էջմիածին (Դիանա Գասպարյան), Արևաշատ (Սուսաննա Գևորգյան), Արտամետ (Անահիտ Դավթյան), Գեղարքունիքի մարզի Գեղաքար (Կարինե Մարտիրոսյան), Լոռու մարզի Բազում (Սրբուհի Հարությունյան), Քարածոր (Հրանուշ Ռոստոմյան), Կոտայքի մարզի Նոր Երզնկա (Ալինա Հարությունյան), Շիրակի մարզի խոշորացված Ամասիա (Ջեմմա Հարությունյան) համայնքները:

Շարունակությունը՝ էջ 4

2016-ի դրությամբ՝ 2.02%

793 համայնքներից 17-ը ղեկավարում էին կանայք

2019-ի դրությամբ՝ 1.8%

502 համայնքներից միայն 9-ն են ղեկավարում կանայք

ՏԻՄ-2019

Սեպտեմբերին հերթական ընտրություններ կանցկացվեն 17 համայնքում

ԿԸՀ-ի որոշմամբ, այս տարվա ընթացքում երեք օր էր առանձնացվել հերթական ՏԻՄ ընտրությունների անցկացման համար՝ փետրվարի 17-ին, հունիսի 9-ին և սեպտեմբերի 29-ին:

Սեպտեմբերի 29-ին տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններ են նշանակված Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Տավուշի 17 համայնքներում:

Կին համայնքապետների թիվը համալրվեց ևս մեկով

Հունիսի 9-ին ՏԻՄ ընտրություններ անցկացվեցին հանրապետության 23 համայնքում, որոնցից 14-ում ընտրությունները հերթական էին, իսկ 9-ում՝ արտահերթ: Ընտրությունների արդյունքում կին համայնքապետների թիվը Հայաստանում համալրվեց ևս մեկով: Այսօր Հայաստանի 502 համայնքներից 9-ն են կանայք ղեկավարում:

Ռեկորդակիր Դիտակ համայնքը

Հունիսի 9-ին կայացած ՏԻՄ ընտրություններում ավագանու անդամի 97 թեկնածուներից 11-ն էին կին, նրանցից ընտրվել են 7-ը: Ռեկորդակիրը Արարատի մարզի Դիտակ համայնքն էր, որտեղ առաջադրված 6 թեկնածուներից 5-ը կին էին, և նրանցից 4-ն ընտրվեցին: Այժմ Դիտակ գյուղում ավագանու հինգ անդամներից 4-ը կին են:

Առավելագույն ձայներ ստացան իրենց համայնքներում

Փետրվարի 17-ին ՏԻՄ ընտրություններ անցկացվեցին հանրապետության 24 համայնքում, որոնցից 14-ում ընտրությունները հերթական էին, իսկ 10-ում՝ արտահերթ: 20 համայնքում համայնքապետ էին ընտրում, և որևէ մեկում ղեկավարի պաշտոնի համար առաջադրված կին թեկնածուներ չկային:

Համայնքներից չորսում անցկացվեցին ավագանու անդամի ընտրություններ, և դրանցից միայն 3-ում՝ Մարգարայում, Գետահովիտում ու Իջևանում, ավագանու անդամ դառնալու համար պայքարող 5 կին թեկնածուներ կային: Նրանցից երեքն ընտրվեցին, ընդ որում՝ առավելագույն ձայներ ստանալով իրենց համայնքներում:

Թվերն են խոսում

Հայաստանի կեսից ավելի համայնքների ավագանիներում կանայք չկան



Հանրապետության 502 համայնքներից 275-ի ավագանիների կազմում կանայք չկան: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2019-ի հունվարի տվյալներով՝ հանրապետության համայնքների ավագանու 4011 անդամներից 373-ը կամ 9.3%-ը կանայք են: Համեմատության համար նշենք, որ 2016-ին ավագանիներում կանանց ներկայացվածությունը կազմում էր 11.7%:

Կանայք առավել մեծ ներկայացվածություն ունեն Լոռու, Արարատի, Արմավիրի համայնքների ավագանիներում՝ համապատասխանաբար, 15.88%, 13.58%, 12.55%: Առավել ցածր է կանանց ներկայացվածությունը Գեղարքունիքի համայնքներում՝ կազմելով 3.29 %: Ընդհանուր առմամբ, կանանց ներկայացվածությունը զգալիորեն պակասել է այն մարզերում, որտեղ համայնքների խոշորացման գործընթացն առավել ակտիվ է ընթացել:

Ավագանու կազմում կանայք առավել մեծ ներկայացվածություն ունեն Երևանում, Գյումրիում և Վանաձորում, որտեղ ՏԻՄ ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով: Այսօր Երևանի ավագանիում կանանց ներկայացվածությունն ամենամեծն է բոլոր ընտրովի մարմիններից՝ 32% է կազմում: Մյուս երկու խոշոր քաղաքների՝ Շիրակի մարզկենտրոն Գյումրիի և Լոռու մարզկենտրոն Վանաձորի ավագանիներում կին անդամները կազմում են 24%:

Փաստենք, որ ՏԻՄ-երում կանանց ամենաբարձր ներկայացվածությունն ապահովված է միայն համամասնական ընտրակարգով ընտրվող ավագանիներում, իսկ տեղական իշխանության մակարդակում կանանց ընդգրկվածության կրճատման հիմնական պատճառը համայնքների խոշորացման գործընթացն է: Օրինակ՝ 2016-ին և 2017-ին կայացած ընտրությունների արդյունքում 465 համայնքների խոշորացումից ձևավորված բոլոր 52 համայնքների ավագանիների կազմում կանանց ներկայացվածությունն առնվազն 2-3 անգամ իջել էր, քան եղել էր մինչև խոշորացումը: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանը վերջերս տեղեկացրեց, որ համայնքների խոշորացման գործընթացը շարունակվելու է, և նախարարությունը, հաշվի առնելով գործընթացի հետ կապված օբյեկտիվ դժգոհությունները, առաջիկայում համայնքների խոշորացման նոր ծրագիր կներկայացնի: Նաև օրենսդրական փոփոխություններ են նախապատրաստվում ՏԻՄ-երի մասին օրենքում: Հուսանք, որ կանանց ներկայացվածության նվազման հարցն էլ կդիտարկվի օբյեկտիվ դժգոհությունների շարքում:

Առաքելություն

«Կանայք քաղաքականության մեջ» ծրագիր. մեկնարկը տրված է

Տարեսկզբին Հայաստանում մեկնարկեց «Կանայք քաղաքականության մեջ» ծրագիրը, որի նպատակն է ուժեղացնել կանանց դերը հասարակության մեջ և որոշումների կայացման մակարդակում, ինչպես նաև նպաստել երիտասարդների ներգրավմանը տեղական կառավարման և զարգացման գործընթացներում՝ հիմնվելով արդեն իսկ գոյություն ունեցող կարողությունների վրա և ընդլայնելով վերջին տարիների ընթացքում ձեռք բերված դրական փորձը: Ծրագիրն իրականացվելու է առաջիկա 2,5 տարիների ընթացքում ՄԱԿ- ի Զարգացման ծրագրի և ՕքսԵՋեն հիմնադրամի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ և Մեծ Բրիտանիայի «Լավ կառավարման հիմնադրամի» ֆինանսավորմամբ:

«Կանանց և տղամարդկանց հավասարությունը առաջնահերթություն է ողջ աշխարհում»

«Ես անհամբեր սպասում էի այս նախաձեռնության մեկնարկին: Կանանց և տղամարդկանց հավասարությունը առաջնահերթություն է ոչ միայն Հայաստանում, այլև Մեծ Բրիտանիայում ու նաև ողջ աշխարհում: Ես վստահ եմ, որ կանանց հզորացմամբ է հնարավոր ապահովել երկրի կայուն զարգացումն ու տնտեսության զարգացումը: Խոսքս միայն կանանց թվի մասին չէ քաղաքական պաշտոններում, այլև որոշումների կայացման մակարդակում նրանց հմտությունների, կարծիքների բազմազանության ապահովման մասին է: Ես հույս ունեմ, որ այս կարծիքը կիսում են նաև տղամարդիկ»...

Զուդիթ Ֆարնուորթ,
ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան

«Դժվար է լինելու, որովհետև ծրագիրը չափազանց հավակնոտ թիրախներ է նախանշել»

«Ծրագրի մեկնարկը սպասված էր, բայց մենք նաև գիտակցում ենք, որ դժվար է լինելու, որովհետև ծրագիրը չափազանց հավակնոտ թիրախներ է նախանշել: Բայց դա մեզ չի վախեցնում, քանի որ մենք արդեն իրականացրել ենք շատ ծրագրեր Հայաստանում: Հայաստանը դեռ ճանապարհ ունի անցնելու գենդերային հավասարության հարցում, այդ ուղղությամբ անշուշտ բարելավման տեղ ունի: Այս ծրագրով մենք կփորձենք ամրապնդել կանանց կարողությունները կոռուպցիայի դեմ պայքարում՝ համայնքներում ներգրավելով մեծ թվով կանանց: Մենք նաև երիտասարդների հետ ենք աշխատում, քանի որ վստահ ենք, որ նրանց ներգրավումը շատ կարևոր է այս բոլոր նպատակները կյանքի կոչելու համար: Մենք նաև պետք է ստեղծենք փորձագիտական մեծ համայնք այս հարցում, և, համոզված եմ, արդյունքներն իրենց սպասել չեն տա»:

Դմիտրի Մարիյասին,
ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր,
մշտական ներկայացուցիչ

«Տեղական մակարդակում կանանց ներկայացվածության ցուցանիշները մտահոգիչ ցածր են»

«Միայն միացյալ ջանքերով է հնարավոր իրականացնել ու խթանել կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանում: Կան շատ խոչընդոտներ, որոնք դրան խանգարում են, բայց շատ կարևոր են հասարակության իրազեկվածությունը և քաղհասարակության կողմից գործադրվող ջանքերն այդ ուղղությամբ: Թեև հեղափոխությունից հետո շատ բան փոխվեց ՀՀ-ում, այդուհանդերձ այսօր էլ մենք բավականին ցածր ցուցանիշներ ունենք քաղաքականության մեջ կանանց ներգրավվածության իմաստով: Այո՛, ԱԺ-ում շոշափելի արդյունքներ ունենք, կին պատգամավորների թիվն աճել է, սակայն նույնը չենք կարող ասել կառավարության կազմի մասին, որտեղ ունենք ընդամենը մեկ կին նախարար: Իսկ տեղական մակարդակում ցուցանիշներն ավելի մտահոգիչ ու ցածր են՝ ողջ ՀՀ-ում կա ընդամենը մեկ կին քաղաքապետ և ութ կին գյուղապետ: Այս թվերը չեն կարող չմտահոգել, և մենք հույս ունենք, որ ծրագիրը հնարավորություն կտա բարձրացնելու կանանց ակտիվությունը»:

Մարգարիտա Հակոբյան,
ՕքսԵՋեն հիմնադրամի գործադիր տնօրեն

«Մեր նպատակն է հզորացնել կանանց»

«Ծրագրի անվանումը՝ «Կանայք քաղաքականության մեջ», արդեն իսկ ամեն ինչ ասում է: Մենք պետք է այնպես ակտիվ աշխատենք, որ հաջորդ ընտրություններին ունենանք լրիվ այլ պատկեր, և, համոզված եմ, որ հասնելու ենք դրան: Այո՛, կանանց ներկայացվածությունն ԱԺ-ում աճել է, սակայն ՏԻՄ-երում բավարար աճ չունենք, կանայք դեռ չեն կարողանում լիարժեք օգտագործել իրենց ներուժը: Մեր նպատակն է հզորացնել կանանց կարողությունները, բարձրացնել նրանց ներկայացվածությունը քաղաքական կառույցներում, աշխատել երիտասարդների հետ, որպեսզի նրանք դառնան համայնքներում կին առաջնորդների աջակիցները: Առաջիկա 2,5 տարիների ընթացքում մենք ձգտելու ենք հասնել մի իրավիճակի, երբ քաղաքական դաշտ մտնելու կանանց հետաքրքրվածությունը ապահովված կլինի համապատասխան մեխանիզմներով ազգային և տեղական մակարդակում: Բացի այս, արվելու է նաև կուսակցությունների գենդերային զգայունության գնահատում: Ու թեև ծրագրի ավարտից հետո դեռ ժամանակ կպահանջվի, որպեսզի արդյունքներն իրապես տեսանելի լինեն, մենք համոզված ենք, որ հենց այդպես էլ լինելու է»:

Նատալյա Հարությունյան,
ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր,
«Կանանց հզորացման և գենդերային հավասարության» ծրագրերի ղեկավար

«Հաջողության գրավական ենք դիտարկում նաև հանրային ընկալումներում դրական տեղաշարժը»

«Ծրագիրն ավարտելու ենք 2021 թվականին, և առաջիկա երկու տարիների ընթացքում մենք ակնկալում ենք, որ ազգային և տեղական քաղաքականությունները կդառնան կանանց մասնակցության համար ավելի նպաստավոր՝ հատկապես համայնքներում: Դրան հասնելու համար մենք պետք է ստեղծենք քաղաքական բացերի վերաբերյալ լուրջ ապացուցողական բազա: Ծրագրի շրջանակում անցկացվելու է լայնածավալ մասշտաբային ուսումնասիրություն, որը բաղկացած է մի քանի բաղադրիչներից: Որպես հաջողության գրավական մենք դիտարկում ենք նաև հանրային ընկալումներում դրական տեղաշարժն և ցանկանում, որ այն կարծրատիպերը, որոնք խանգարում են կանանց, վերանան»:

Քրիստինե Հովհաննիսյան,
ՕքսԵՋեն հիմնադրամի ծրագրերի ղեկավար

Ի՞նչ անել

Այս տարվա մարտին ՕքսԵՋեն հիմնադրամի նախաձեռնությամբ ձևավորված Ազգային ժողով- ՔՀԿ համագործակցության հարթակի մասնակից ավելի քան երկու տասնյակ կազմակերպություններն ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ՝

- Հաշվի առնելով ՏԻՄ համակարգում կանանց ներկայացվածության չափազանց ցածր ցուցանիշները՝ ընդլայնել համամասնական ընտրակարգով ավագանիներ ձևավորող համայնքների շարքը՝ ներառելով հանրապետության քաղաքային և խոշորացված համայնքները:
- Վերանայել ՀՀ ընտրական օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանվող կուսակցությունների ցուցակներում սեռերի ներկայացվածության քվոտան՝ փոխարինելով գործող ձևակերպումն այլ՝ «կուսակցությունների համամասնական ցուցակներում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 60 տոկոսը» ձևակերպմամբ և տարածելով այդ շեմը համամասնական ընտրակարգով իրականացվող ՏԻՄ ընտրությունների վրա:
- Համամասնական ՏԻՄ ընտրություններին անցնելուն մեկտեղ դիտարկել նաև քաղաքացիական նախաձեռնությունների առաջադրման հնարավորությունը:
- Նվազեցնել կուսակցությունների և դաշինքների՝ ավագանու կազմում ներգրավվելու ընտրական անցողիկ շեմը:
- Հստակեցնել և ընդլայնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և տարածքային ընտրական հանձնաժողովների պարտավորությունները և գործառույթները ընտրությունների և նրանց ընթացակարգերի մասին բնակչության լայն իրազեկումն ապահովելու ուղղությամբ:
- Օրենսդրորեն ամրագրել ԿԸՀ-ի պարտավորությունը հավաքել և հրապարակել ցանկացած ընտրություններին վերաբերող բոլոր տվյալները սեռի սկզբունքով տարանջատված, ինչպես նաև ներառել գենդերային բաղադրիչը ընտրությունների կազմակերպման և անցկացման համար պատասխանատու բոլոր մարմինների աշխատանքում:

- ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թթ. ռազմավարությամբ և միջոցառումների ծրագրում նախատեսել կանանց քաղաքական մասնակցության խթանմանն ուղղված հստակ գործողություններ և միջոցառումներ՝ ներառելով ՏԻՄ համակարգում կանանց ներկայացվածության բարձրացման տեսլականը:
- Կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի կատարելագործման շրջանակում հստակեցնել մարզային և համայնքային կառույցների գործողություններն այդ ուղղությամբ:

Զայն բազմաց

Կանայք ՏԻՄ-երում. հանրային ընկալումներ

«Տեղական ինքնակառավարման բարեփոխումների համատեքստում՝ կանանց առաջխաղացման և որոշումների կայացմանը նրանց մասնակցության հանրային ընկալումն ու քաղաքականության բացերը» թեմայով հետազոտությունն իրականացվել է «Կանայք քաղաքականության մեջ» ծրագրի շրջանակներում՝ Հայաստանի բոլոր մարզերում և Երևանում՝ 1700 ռեսպոնդենտների շրջանում հարցումների միջոցով: Ներկայացնում ենք հետազոտության նախնական արդյունքների ուշագրավ դրվագները:

Կանանց աշխատանքը ՏԻՄ-երում դրական է գնահատվում

Հարցման մասնակիցների միայն 5.9%-ն է նշել, որ իրենց համայնքի ղեկավարը կին է, ինչը սպասելի էր՝ հաշվի առնելով, որ հանրապետությունում կին համայնքի ղեկավարների թիվն ընդամենը 1,8% է կազմում:

Ի՞նչ հաջողությամբ է կին համայնքապետը կատարում իր պարտականությունները հարցին, հարցվածների 80%-ը դրական է գնահատել կին համայնքապետի աշխատանքը և միայն 5%-ն է տվել «վատ» գնահատական:

Կին համայնքապետներից առավել գոհ են գյուղական բնակավայրերի բնակիչները, որոնց 63.2%-ն է նշել, որ համայնքապետը լավ է կատարում իր պարտականությունները: Հաշվի առնելով այն փաստը, որ կանայք հիմնականում հաջողության են հասնում փոքր և սոցիալական ծանր վիճակում գտնվող գյուղերում, որոնք սահմանափակ ռեսուրսներ ունեն, բնակիչների կողմից համայնքապետին տված բարձր գնահատականն ավելի է արժևորվում:

Պատասխանների դիտարկումն ըստ սեռի ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ կին համայնքապետներին ավելի բարձր են գնահատում կանայք, քան տղամարդիկ:

Հարցվածների 84%-ն է նշել, որ ցանկանում է համայնքի ղեկավարը շարունակի իր պաշտոնավարումը, ընդ որում, այդպիսի կարծիք են հայտնել այս հարցին պատասխանած տղամարդկանց 75.0%-ը և կանանց 90.0%-ը:

Հարցման արդյունքներն անուղղակիորեն հաստատում են այն ակնկալիքները, որ կին համայնքապետները կարող են նպաստավոր դաշտ ստեղծել կանանց տեսանկյունից կարևոր հարցերի հնչեցման, կանանց կարիքների վերհանման և դրանց լուծման համար: Բացի այդ, չի հաստատվում տարածված այն կարծրատիպը, որ կանայք կին պաշտոնյաներին վատ են վերաբերվում: Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ կանանց աշխատանքը առավել արժևորում են հենց կանայք:

Ավագանու կազմից և աշխատանքից անտեղյակ բնակիչները

Հարցման մասնակիցների 34.2% -ը նշել է, որ համայնքում կան ավագանու կին անդամներ, 27.1 %-ը՝ որ չկան: Հատկանշական է, որ հարցվածների զգալի մասը՝ 38.7% -ը, նշել է, որ չգիտի՝ ավագանու կազմում կանայք կան, թե՞ ոչ: Հարցվածների անտեղյակությունն ավագանու կազմի վերաբերյալ կարելի է դիտարկել ընդհանրապես ՏԻՄ-երի աշխատանքի ու լիազորությունների մասին ցածր տեղեկացվածության համատեքստում:

Կին ավագանու անդամների աշխատանքը տղամարդկանց հետ համեմատելիս հարցվածների միայն 10,7%-ն է գնահատել «ավելի վատ, քան ավագանու տղամարդ անդամները», ընդ որում, այդպես պատասխանողների կեսը կանայք են, կեսը՝ տղամարդիկ: Հարցվածների գրեթե մեկ երրորդը՝ 29.6%-ը, գնահատել է կանանց աշխատանքը «Ավելի լավ, քան ավագանու տղամարդ անդամները», և 34.9%-ը նշել է՝ «Այնպես, ինչպես ավագանու տղամարդ անդամները»: Հարցվածների մեկ քառորդը՝ 24.8%-ը, դժվարացել է պատասխանել, և այդ թիվը գրեթե անփոփոխ է բոլոր հարցերում, որոնք առնչվում են ՏԻՄ-երի աշխատանքի մասին տեղեկացվածությանը:

Անկախ վերը շարադրված գնահատականներից, հարցվածների 78%-ը, այդ թվում՝ տղամարդկանց 77.6%-ը և կանանց 78.2%-ը, նշել է, որ կցանկանար, որ կին ավագանու անդամը շարունակեր պաշտոնավարումը: Դա ավելին է, քան կին ավագանիներին «տղամարդկանցից ավելի լավ» կամ «տղամարդկանց հետ հավասար» գնահատածների 64.5%-ը:

Պատրա՞ստ եք քվեարկել կին թեկնածուի օգտին

Հարցվածների 10.2%-ը, այդ թվում՝ կանայք, պատրաստակամություն է հայտնել համայնքի ղեկավարի ընտրություններում միանշանակ քվեարկելու կին թեկնածուի օգտին, դրա հետ մեկտեղ կրկնակի մեծ թվով հարցվածներ, այդ թվում՝ կանանց 19.7%-ը, միանշանակ ընտրելու են տղամարդ թեկնածուին: Հաշվի առնելով այն փաստը, որ կանանց մեծ մասը նշել է, որ քվեարկելու է «երկուսին հավասարապես», կարելի է եզրակացնել, որ «կանայք կանանց չեն ընտրում» դիրքորոշումը սույն հետազոտության շրջանակում իր հաստատումը չի ստացել:

Չնայած վերբալ մակարդակում հնչեցված նախապատվությունները միշտ չէ, որ համապատասխանում են կոնկրետ իրավիճակում ցուցաբերվող վարքին, հարցվածների 10.2%-ի կողմից հնչեցված կին թեկնածուի օգտին քվեարկելու մտադրությունը գործնականում իրականացրել է հարցվածների 9.9%-ը՝ քվեարկելով կին թեկնածուի օգտին համայնքի ղեկավարի ընտրությունների ժամանակ:

Կանանց չե՞ն նկատում

Թեև հարցվածների զգալի մասը դրական է գնահատում կանանց աշխատանքը համայնքի ղեկավարի և ավագանու անդամների պաշտոնում, ավելին՝ մեծամասնությունը կարծում է, որ նրանք պետք է շարունակեն իրենց պաշտոնավարումը, հարցման արդյունքները փաստում են, որ հանրության կողմից կանանց ներուժը տեսնելու հետ կապված լուրջ խնդիրներ կան: Օրինակ՝ թեպետ հարցվածների 75.9%-ը նշել է, որ ուզում է տեսնել կանանց ավագանու պաշտոնում, նրանց միայն 42.8%-ն է տեսնում իրենց համայնքում այն կանանց, ովքեր կարող են զբաղեցնել այդ պաշտոնը: Նույն կերպ, եթե հարցվածների 63.1%-ը ցանկություն է հայտնում տեսնելու կանանց համայնքի ղեկավարի պաշտոնում, ապա միայն 24.6%-ն է իրենց համայնքում արժանի կին տեսնում համայնքի ղեկավարի դերում: Նույն այդ սկզբունքով, տղամարդիկ, կողմ լինելով ՏԻՄ-երում կանանց մասնակցության ընդլայնմանը, չեն ցանկանում, որ դա իրականություն դառնա իրենց հարազատների՝ կնոջ, դուստրերի, քույրերի ներգրավման միջոցով:

Ակնկալիքները մեծ են, թերահավատությունը՝ նույնպես

Ընդհանուր առմամբ, հարցումը ցույց տվեց, որ հանրության ակնկալիքները տեղական իշխանությունում ներկայացվածության ընդլայնումից բավականին մեծ են, այսինքն՝ հանրային ընկալումներում կանայք միանշանակ կարող են դառնալ դրական փոփոխությունների մենեջերներ: Այլ հարց է, որ դա կարող է իրականություն դառնալ միայն այն դեպքում, եթե իրապես ընդլայնվեն ՏԻՄ համակարգի ղեկավար պաշտոններում ընդգրկվելու կանանց հնարավորությունները, իսկ այս հարցում հանրության դիրքորոշումները միանշանակ չեն:

Մասնավորապես, հարցվածների կարծիքները կիսվել են հետևյալ պնդման շուրջ. «Մեր համայնքում երբեք չի բարձրանա կանանց ներգրավվածության աստիճանը ՏԻՄ-ում, քանի որ դրան կխանգարեն ձևավորված սովորույթները, կարծրատիպերը, մտածելակերպը»՝ 50.4%-ը չի համաձայնվել այդ պնդմանը, իսկ 43.5%-ը կասկածի տակ է դրել կարծրատիպերի հաղթահարման և կանանց առաջընթացի հնարավորությունները, 6.2%-ն էլ դժվարացել է պատասխանել: Ստացվում է, որ հանրությունը, մի կողմից, որոշակի հույսեր է կապում ՏԻՄ-երում կանանց ներգրավման հետ, մյուս կողմից էլ՝ թերահավատություն ցուցաբերում կանանց առաջընթացի հնարավորությունների հարցում:

Ովքեր են ուզում մասնակցություն ունենալ ՏԻՄ-երի աշխատանքում

ՏԻՄ-երում որևէ պաշտոն զբաղեցնել ցանկացող կանանց թիվը չի գերազանցում 16.6%-ը, ընդ որում, եռակի փոքր է այն կանանց թիվը, ովքեր ցանկանում են դառնալ համայնքի ղեկավար:

Ի դեպ, ՏԻՄ-երում որևէ պաշտոն զբաղեցնելուցանկություն ունեցող տղամարդկանց թիվն էլ բավականին ցածր է (12.4%): Այսինքն՝ ընտրովի այլ պաշտոնների, օրինակ՝ Աժ պատգամավորների համեմատ ՏԻՄ-ը, բացառությամբ մի քանի խոշոր քաղաքների, պակաս գրավիչ է, ընդ որում, ոչ միայն կանանց համար:

Հիմնական պատճառներից մեկը ՏԻՄ ինստիտուտի լիարժեք կայացման հետ կապված խնդիրներն են, որոնք անդրադառնում են նաև կանանց ու տղամարդկանց մոտիվացիայի վրա: Սակայն, ինչպես ցույց են տալիս ընտրություններում իրական մասնակցության ցուցանիշներն անդրադառնում են տարբեր կերպ:

Ի դեպ

«Ո՞ր պաշտոններում ավելի շատ կուզենայիք կանանց տեսնել»

«Ո՞ր պաշտոններում ավելի շատ կուզենայիք կանանց տեսնել» հարցի պատասխանները, ընդհանուր առմամբ, սպասելի էին. որքան բարձր է նշված պաշտոնը, այնքան ավելի քիչ թվով հարցվածներ են տեսնում կանանց այդ պաշտոնում: Ամենաշատը կանանց տեսնում են ավագանու անդամի պաշտոնում (75.9%), ամենաքիչը՝ վարչապետի պաշտոնում (46.2%): Տեղակալների դեպքում կանանց ավելի շատ են տեսնում, քան որպես առաջին դեմքեր: Նշված օրինաչափությունից դուրս են միայն համայնքի ղեկավարի (63.1%) կամ գյուղի վարչական ղեկավարի պաշտոնները (54.7%), որոնցում հարցվածները ավելի քիչ են ուզում տեսնել կանանց, քան, ասենք, փոխնախարարի (68.1%) կամ նախարարի (64.2%) պաշտոններում:



Հարցադրում

Արդյո՞ք կանայք չեն ցանկանում առաջադրվել

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ՏԻՄ-երում կանանց չառաջադրվելու ամենատարածված հինգ պատճառները հասարակության ընկալումներում հետևյալն են.

- Կանանց թույլ չեն տալիս ընտանիքի անդամները 73.4%
- Կանայք իրենք չեն ցանկանում 55.2%
- Կանանց խանգարում է հասարակության բացասական վերաբերմունքը 51.1
- Ավագանու անդամի աշխատանքը չվարձատրվող է 51.1%
- Կանայք խուսափում են մեծ պատասխանատվությունից 47.6%

Առանձնակի ուշադրության է արժանի հարցվածների 55.2%-ի կողմից մատնանշված «կանայք իրենք չեն ցանկանում» պատճառաբանությունը և դրա հետ մեկտեղ մեկ այլ հարցի միջոցով բացահայտված ՏԻՄ-երում որևէ ընտրովի պաշտոն զբաղեցնել չցանկացող կանանց մեծ թիվը (83.3%):

Իրականում չցանկանալու մասին պատճառաբանությունը հետևանք է հարցվածների այլ պատասխաններով բացահայտվող և հասարակությունում գոյություն ունեցող մի շարք խոչընդոտների և արգելքների, որոնք կարելի է երեք խոշոր խմբերի բաժանել՝

- **Պատճառաբանությունների ամենամեծ մասը** կարծրատիպային բնույթի է և հաստատում է խտրականության առկայությունը: Դրանք են՝ «Կանանց թույլ չեն տալիս ընտանիքի անդամները», «Կանանց խանգարում է հասարակության բացասական վերաբերմունքը», «Խանգարում է կին լինելը», «Խանգարում են ձևավորված սովորույթները, կարծրատիպերը, մտածելակերպը», «Չընտրվելու պարագայում հարգանքի կորուստի վախը կամ ամոթի զգացումը»: Այս պատճառները հաստատում են հասարակական կարծիքի վրա ներազդելու և այդ ուղղությամբ քարոզչական բնույթի լայնածավալ և երկարատև աշխատանք իրականացնելու անհրաժեշտությունը.
- **Պատճառների երկրորդ մեծ խումբը** վերաբերում է կանանց դեպքում ռեսուրսների, կարողությունների և ժամանակի սղության հետ կապված խնդիրներին և ներառում է «Կանայք ունեն կառավարչական հմտությունների պակաս», «Ֆինանսական միջոցների սղությունը/բացակայությունը», «Տեղեկատվության պակասը ընտրությունների գործընթացի, համայնքի ղեկավարի լիազորությունների մասին և այլն», «Չունեն անհրաժեշտ ծանոթություններ, կապեր», «Կինը չի կարող համատեղել ընտանիքը և ՏԻՄ-ում աշխատանքը» պատճառաբանությունները:

Հատկանշական է, որ կանանց կրկնակի ծանրաբեռնվածության և ընտանիքի ու ՏԻՄ-ում աշխատանքի անհամատեղելիության մասին թեզն առաջ են տանում ավելի շատ տղամարդիկ, քան կանայք, մինչդեռ հարցված կանանց երկու երրորդն ընդհանրապես դա խոչընդոտ չի համարում: Այս շարքում կարելի է ներառել նաև կանանց ցածր ինքնագնահատականի, չափազանցված ինքնաքննադատության և կարծրատիպերի հետևանք հանդիսացող «Կանայք չունեն համապատասխան կրթություն», «Խուսափում են մեծ պատասխանատվությունից», «Կինը չի կարող ճիշտ/ համապատասխան որոշումներ կայացնել» պատճառաբանությունները: Այս պատճառների չեզոքացման ուղղությամբ կատարվող քայլերը ենթադրում են անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման, հմտությունների ձևավորման, կանանց ինքնագնահատականի բարձրացման նպատակով կրթական ծրագրերի իրականացում.

- **Պատճառաբանությունների երրորդ խումբն** անմիջականորեն կապված է պետական քաղաքականությունից հարցվածների ակնկալիքների հետ և ներառում է «Կառավարությունը բավարար չափով չի կարևորում կանանց մասնակցությունը քաղաքականությանը», «Օրենսդրության ոչ լիարժեք լինելը», «Ավագանու անդամի աշխատանքը չվարձատրվող է»:

Կանայք համայնքի ղեկին

Զեմմա Հարությունյան.

«Ամուր նյարդեր, հավասարակշռություն և գրագետ աշխատակազմ»

Ադամատներով կարսեցի, Ամասիայի ծնունդ, Հայաստանի հյուսիսում մեծացած ու կոփված, քարի պես ամուր կամքով և արևի պես ջերմ: Զեմմա Հարությունյանն է: Շիրակի մարզի Ամասիա խոշորացված համայնքի ղեկավարը: Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտում ուսումն ավարտելուց հետո շտապել է ծննդավայր, առաջին հերթին անցել աշխատանքի և ամուսնացել հարևանի տղայի հետ: Ամասիայում շատ պաշտոններ է զբաղեցրել՝ ջրային տնտեսության ավագ ինժեներ, շրջխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ, կադաստրի մարմնի պատասխանատու...

Այսօր Զեմմա Հարությունյանը սովորական համայնք չի ղեկավարում: Ամասիան խոշորացված համայնք է, կազմում էլ 9 գյուղ ունի, բոլորի վարչական ղեկավարները տղամարդ են: Համայնքապետը խոստովանում է՝ ամուր նյարդեր, հավասարակշռություն և գրագետ աշխատակազմ, առանց այս ամենի անհնար կլիներ աշխատելը: Ասում է՝ արհեստավարժ և գործունյա կադրերը հաջողության հիմնական գրավականն են, կյանքի և աշխատանքային հարուստ փորձ ունեցողների կողքին համայնքապետարանում այսօր շատ երիտասարդներ են աշխատում և մասնագիտանում:

Խոշորացված համայնքի ճիշտ կառավարումն ուղիղ համեմատական է ձեռքբերումներին: Ամասիան այս առումով հպարտանալու տեղ ունի: Շահել են հատկապես գյուղերի փոքրիկները: Մանկապարտեզներն են կարգի բերվել ու վերաբացվել: Համայնքապետը հաջողությամբ է համագործակցում ինչպես միջազգային տարբեր կազմակերպությունների, այնպես էլ Եվրոպական միության հետ: Ամասիայում բացվել և գործում է բրդի վերամշակման արտադրամասը, որը կայուն աշխատանքով է ապահովելու 60-ից ավելի տեղաբնակի:

«Ինչ անում եմ, հաշվի եմ նստում բնակչության կարծիքի և առաջնային կարիքների հետ: Ես միանձնյա որոշումներ չեմ կայացնում: Մարդիկ պետք է ասեն, թե ինչն են այդ պահին համարում կարևոր, որ քննարկենք, հասկանանք, մեր հնարավորությունների սահմաններում լուծումներ գտնենք», - ասում է համայնքապետը՝ նշելով, որ խոշորացված համայնքի խնդիրներն էլ են խոշոր լինում, և դրանց լուծման համար միշտ չէ, որ մեծ հնարավորություններ կան: Բայց կենսական նշանակության հարցեր, արդեն իսկ, կարգավորվել են. Ամասիայի կազմում գտնվող բոլոր գյուղերն էլ ապահովվել են գիշերային լուսավորությամբ...

Սրբուհի Հարությունյան.

«Պատճառաբանություններ չեմ փնտրում, այլ՝ լուծման ուղիներ»

Սրբուհի Հարությունյանը Լոռու մարզի միակ կին համայնքապետն է, արդեն 11 տարի ղեկավարում է մոտ 1900 բնակիչ ունեցող Բազում համայնքը: 1970-ականներին Գուգարքից եկել, հարսնացել է Բազում գյուղում: Երկար տարիներ գյուղում աշխատել է որպես հաշվապահ, հետո, երբ 2008-ին առաջադրեց իր թեկնածությունը համայնքապետի պաշտոնի համար, ընտանիքը ոգևորեց, աջակցեց, գյուղացիներն էլ ընտրեցին: Սկսեց աշխատել, հաջորդ ընտրական փուլում նորից ընտրվեց, արդեն երրորդ անգամն է վերընտրվել...

- Առաջին անգամ, երբ ընտրվեցի, վախենում էի ամեն դուրս գրած կոպեկի համար, ինքս անձամբ էի գնում, հետևում, մասնակից լինում: Երկրորդ անգամ ընտրվելուց հետո աշխատելն ավելի հեշտ էր, վերահսկողական մեխանիզմներին ավելի լավ էի տիրապետում, աշխատանքիս մեջ էլ ավելի հմուտ էի: Հիմա արդեն թվում է՝ ոչ մի դժվարություն էլ չկա, սովորել ենք ամեն ինչ հաղթահարելու մեխանիզմներ գտնել: Իմ առաջին օգնականն իմ տեղակալն է, ավագահին, գյուղացիները: Կարողանում ենք միասնական աշխատել և հաջողության հասնել: Ընդհանրապես, ինձ համար չկա կին-տղամարդ տարբերակված աշխատանք: Մարզխորհրդի նիստերին սկզբում կաշկանդվում էի, ամաչում էի ներկայանալ, 100-ից ավելի տղամարդ գյուղապետներ էին, և ես՝ միակ կինը: Հետո զգացի, որ դա առանձնապես չի էլ նկատվում նրանց կողմից, և այդպես սովորական դարձավ,- ասում է Սրբուհին:

Իր կառավարման օրոք համայնքում իրականացված ծրագրերից առանձնացնում է գյուղի լուսավորության, ճանապարհների մասնակի բարեկարգման, խճապատման, գերեզմանատան ցանկապատման աշխատանքները: Համայնքային կենտրոն են կառուցել, խաղահրապարակով և մանկապարտեզով: Այսօր 20 երեխա մանկապարտեզ է հաճախում: Գյուղի մի թաղամասն ամբողջությամբ ապահովվել է խմելու և ոռոգման ջրով: Բայց երբ խոսք է գնում առաջիկայում հրատապ լուծում պահանջող խնդրի մասին, դարձյալ նշում է ջուրը: «Գյուղի մյուս թաղամասերն էլ պետք է անպայման ջուր ունենան»,- որոշել է նա:

- Կինը տնտեսող է, կազմակերպված և եթե նպատակ է դրել, անպայման հասնում է իր նպատակին, և գիտեք ինչո՞ւ, որովհետև երբեք պատճառաբանություններ չի փնտրում, այլ՝ լուծման ուղիներ,- այս կարգախոսով է ապրում և աշխատում Սրբուհի Հարությունյանը:

Հրանուշ Ռոստոմյան.

«Գյուղում ինձ, իմ սկզբունքայնությունն ու արած գործերը բոլորը գիտեն»

Այս տարվա հունիսի 9-ին Լոռու մարզի Քարաձոր համայնքում անցկացված ՏԻՄ արտահերթ ընտրություններում առաջադրված 4 թեկնածուներից առավել մեծ թվով ձայներ ստացավ 68-ամյա Հրանուշ Ռոստոմյանը, ով իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է:

- Ծնվել ու մեծացել եմ այս գյուղում, ուզում եմ, որ իմ գյուղում էլի մի բան անեմ, արել եմ միշտ, անշահախնդիր իմ ժողովրդի համար և հիմա էլ ուզում եմ աշխատեմ, որ իմ անունը գյուղում միշտ լավ հիշվի, վատ չհիշվի, ուզում եմ, քանի կենդանի եմ՝ աշխատեմ... Առողջ եմ, առույգ եմ, առավոտից աշխատում եմ մինչև ժամը 12-ը, հետո էլի առավոտյան 5-ին արթնանում եմ ու էլի սկսում աշխատել,- իր մասին այսպես է պատմում Հ. Ռոստոմյանը:

Գյուղում վերջին շրջանում լարվածությունը գրեթե գագաթնակետին էր հասել, նախկին գյուղապետը մեղադրվում էր չարաշահումների մեջ, որի պատճառով էլ, ժողովրդի ճնշումների ազդեցության տակ, ավագանու հետ միասին հրաժարականի դիմում ներկայացրեց: Նշանակվեցին արտահերթ ընտրություններ: Հրանուշ Ռոստոմյանը ասում է, այս պարագայում կինն էր այն ուժը, որը կարող էր համայնքում առկա լարվածությունը հանդարտեցնել:

- Առաջադրվեցի, որովհետև կարծում եմ, որ եթե գյուղապետը կին լինի, գյուղում այս լարվածությունը կթուլանար, կստեղծվեր լավ մթնոլորտ, մարդիկ իրար կհարգեն, ոչ թե իրենց անձնական շահի համար իրար դեմ կպայքարեն, իսկ իմ պայքարը, որ գյուղում ամեն ինչ լավ վերջանա, մարդիկ իրար հասկանան...

Երբ կայացրեց համայնքապետի թեկնածու առաջադրվելու որոշումը, որդին հեշտությամբ չհամաձայնվեց, բայց որոշումն ընդունված էր:

- Ասաց՝ մամ ջան, քո տարիքն էն չի, գործ չունես, գլուխդ ցավի մեջ մի՛ գցի, դու արի հանգստացի, մենք կաշխատենք, բայց ասի՝ չէ՛, ես չեմ կարա հանգիստ նստեմ, մինչև մեռնելս ես պիտի աշխատեմ ու լինեմ քաղաքականության մեջ,- պատմում է տիկին Հրանուշը:

Նախընտրական քարոզարշավ չէր իրականացնում, ասում է՝ որ գյուղում և՛ իրեն, և՛ իր սկզբունքայնությունն ու արած գործերը բոլորը գիտեն: Դրա համար էլ համոզված էր, որ իր տարիների վաստակը համագյուղացիները կգնահատեին և ձայն կտային հենց իրեն:

Լյուդմիլա Պետրովա.

«Վերին Դվինը ապրում է մեկ ընտանիքի պես...»

«Հեշտ չէ միակ կին համայնքապետը լինելը մարզում»,- ասում է Արարատի մարզի Վերին Դվին համայնքի ղեկավար Լյուդմիլա Պետրովան, ով արդեն 15 տարի է՝ ղեկավարում է Վերին Դվին ասորական համայնքը:

Մինչ այդ տիկին Լյուդմիլան Վերին Դվինի համայնքապետարանում աշխատել է որպես աշխատակազմի քարտուղար, իսկ 2004 թ. ՏԻՄ ընտրություններում առաջադրվել և ընտրվել է համայնքի ղեկավար, ու մինչ այսօր մեծ պատասխանատվությամբ է վերաբերվում իր գործին ու կոչմանը:

- Իմ առաջադրումը եղավ, հիմնականում, համայնքի կողմից, ու երբ ասում էին, թե ինձ ընտրելու են որպես համայնքի ղեկավարի, պատասխանում էի՝ ես ուր, համայնքի ղեկավարն ուր, ես ինչպե՞ս կարող եմ այդ ողջ ծանրությունն ստանձնել: Բայց դա մարդկանց պահանջն էր: Ամուսինս, անգամ սկեսրայրս դեմ չէին, բարեկամ-հարազատներս՝ նույնպես, միայն ես էի դեմ,- պատմում է Լյուդմիլան:

ՏԻՄ ընտրություններում բացարձակ հաղթանակ տարած Լյուդմիլա Պետրովան քայքայված տնտեսության, մարզի ամենաքիչ բյուջե ունեցող համայնքի խնդիրները սկսեց լուծել քայլ առ քայլ:

- Վերին Դվինն ունի շուրջ 2500 բնակիչ, որից 2000-ը ասորիներ են, 500-ը՝ հայեր, կան քիչ թվով եզդիներ, ռուսներ: Մենք վաղուց դարձել ենք մեկ ընտանիք: Հայերից աղջիկ հարս են տանում, իրենց աղջիկներին հարս ուղարկում հայ ընտանիք, ազգությամբ ռուս հարսներ նույնպես ունենք: Վերին Դվինում ամուր են հայ-ասորական բարեկամության հիմքերը: Չլինեին այդ հիմքերը, դժվար թե կարողանայի այդքան երկար ժամանակ կառավարել համայնքը,- ասում է Լյուդմիլան:

Համայնքապետի խոսքով՝ արտագաղթի թափը վերջին տարիներին զգալիորեն նվազել է: Այսօր արտագնա աշխատանքի են մեկնում հատուկենտ մարդիկ. «Ես դեմ եմ արտագնա աշխատանքին, որքան էլ հասկանում եմ պատճառը, ընտանիքը պետք է համատեղ ապրի, այլապես ամուր չի լինի»,- ասում է Լյուդմիլան:

Համայնքապետի շուրջօրյա ծանրաբեռնվածությունը տիկին Լյուդմիլային չի ազատում տնային հոգսերից ու պարտականություններից: Հիմնականում նա է զբաղվում տնտեսությամբ, իսկ գյուղատնտես ամուսնու գործը հողամասի մշակումն ու բերքի իրացումն է, թեև այստեղ էլ առանց Լյուդմիլայի անմիջական մասնակցության գործ չի արվում: «Ամեն օր արթնանում եմ լուսադեմին՝ ժամը 4-5-ին, որ հասցնեմ ամուսնուս ճանապարհել, օրվա ճաշը պատրաստել, տնային գործերն ավարտել, որ չուշանամ աշխատանքից: Երբեմն հանգստյան օրերին ամուսնուս հետ այցելում ենք Երևանում բնակվող դստերս ընտանիքին, թոռնիկներիս շատ եմ կարոտում»,- պատմում է Լյուդմիլան:

Երևանի բուրգը

Վերևներում միայն տղամարդիկ են



Ինչպես հայտնի է, արտահերթ խորհրդարանական ընտրությունների հետո Երևանի ավագանու կազմում ընդգրկված շատ անդամներ, այդ թվում՝ կանայք, դարձան պատգամավոր: Ավագանիում նրանց թափուր տեղերը լրացվեցին քաղաքական ուժերի ցուցակներում ընդգրկված այլ թեկնածուներով, ինչի արդյունքում կանանց ներկայացվածությունը մեծացել է՝ այժմ Երևանի ավագանու 65 անդամից 21-ը կամ 32%-ը կանայք են: Հիշեցնենք, որ մինչ այդ, անցյալ տարվա սեպտեմբերին կայացած Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների արդյունքներով՝ ավագանու 65 անդամից միայն 18-ն էին կանայք, ինչը 27.6% էր կազմում:

Հատկանշական է սակայն, որ կանանց ներկայացվածության ավելացումը Երևանի ավագանիում ոչ մի կերպ չանդրադարձավ քաղաքապետարանի ղեկավար կազմի վրա, որն առաջվա պես ամբողջությամբ տղամարդկանցից է կազմված: Երևանի քաղաքապետն ու իր չորս տեղակալները տղամարդ են, քաղաքապետի բոլոր երեք խորհրդականները տղամարդ են, քաղաքապետի օգնականը, մամուլի քարտուղարը, աշխատակազմի ղեկավարը, քաղաքի գլխավոր ճարտարապետը նույնպես տղամարդ են: Կանայք ի հայտ են գալիս միայն վարչությունների պետերի պաշտոններում, ընդ որում, քաղաքապետարանի 22 վարչությունների պետերից միայն երեքն են կին: Պատկերն ամբողջացնելու համար հավելենք, որ մայրաքաղաքի բոլոր 12 վարչական շրջաններն էլ տղամարդիկ են ղեկավարում: Վարչական շրջանների ղեկավարների 19 տեղակալներից միայն մեկն է կին:

ԵԱՀԿ երկրների ցուցանիշը՝ 36%

2016 թ. տվյալներով, կանանց ներկայացվածության միջին ցուցանիշը ԵԱՀԿ երկրների տեղական ինքնակառավարման մարմիններում կազմում է 36%: Համայնքների ղեկավարների թվում կանանց ներկայացվածությունը տատանվում է 5-25%-ի սահմաններում, փաստում է ԵԱՀԿ 2016-ի զեկույցը՝ «Կանանց քաղաքական առաջխաղացումը ԵԱՀԿ տարածաշրջանում»:

Նշենք, որ դեռևս 1999 թ. Եվրոպայի խորհրդի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը բանաձև ընդունեց, որը նախատեսում է ապահովել տեղական որոշումների կայացման մակարդակում կանանց և տղամարդկանց զուգակշռված ներկայացվածությունը:

Գլխավոր խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
էլ. հասցե՝ womennetam@gmail.com

Համարի վրա աշխատել են՝
Լիա Խոջոյանը, Սոնա Մարտիրոսյանը, Անուշ Ներսիսյանը, Լալա Տեր-Ղազարյանը, Նարինե Մաթևոսյանը, Արմենուհի Մինասյանը

British Embassy Yerevan · UNDP · oxYgen · UKaid · WOMEN IN POLITICS

Թերթի հատուկ թողարկումը պատրաստվել է «Կանայք քաղաքականության մեջ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի և ՕքսԵՋԵՆ հիմնադրամի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ՝ Մեծ Բրիտանիայի «Լավ կառավարման հիմնադրամի» ֆինանսական աջակցությամբ:

Թերթի հատուկ թողարկումը պատրաստվել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության ֆինանսավորմամբ: Արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական դիրքորոշումը: Նյութում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի տեսակետների հետ: